# ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ 24.04.2017թ. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ Է ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐԻ ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐ

21.04.2017 13:29




***Հարգելի փաստաբաններ,***

Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին հարգանքի տուրք մատուցելու նպատակով 2017թ. ապրիլի 24-ին ՀՀ փաստաբանների պալատը կազմակերպում է այցելություն Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիր:

Փաստաբանները կարող են միանալ ՀՀ փաստաբանների պալատի նախաձեռնությանը:

***Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիր այցելությունը տեղի կունենա 2017թ. ապրիլի 24-ին, ժամը 12:00-ին՝ Ծիծեռնակաբերդ տանող ճանապարհի սկզբնամասից (Լենինգրադյան փողոց, դեպի Կարեն Դեմիրճյանի անվան ՄՀՀ կենտրոնական մուտք տանող աստիճանավանդակի մոտից):***

*Հարգանքով՝*

*Հայաստանի Հանրապետության*
*փաստաբանների պալատի*
*աշխատակազմ*

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })